

ՄԱՐԻԱՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ
MARIANA STEPANYAN

ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ ՄԻ ՔԱՆԻ ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐԻ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆ ԳԵՂԱՐԿԵՍՏԱԿԱՆ
ԽՈՍՔՈՒՄ

Ինչպես հայերենում, այնպես էլ գերմաներենում եղանակավորող բառերը պատկանում են չթեքվող խոսքի մասերին: Նախկինում այդ բառերը դրվում էին մակբայների խմբի մեջ: Վերջին տասնամյակներում դրանք շատ լեզվաբանների կողմից խմբավորվում էին որպես առանձին խոսքի մաս:

Առաջին անգամ եղանակավորող բառերը, որպես առանձին խոսքի մաս, առանձնացվել են Մ. Աբեղյանի կողմից: Նա գրում է, որ գոյություն ունեն խոսքի մասնիկների չորս տեսակ՝ 1) կապակցական բառեր (կապեր, համադասական և ստորադասական շաղկապներ), 2) եղանակական բառեր կամ մասնիկներ (միթե, արդյոք, անշուշտ, գրեթե, հո, գուցե), 3) բացասական մասնիկներ (ոչ, չը), 4) պատասխանական բառեր (այո, ոչ): Ըստ Մ. Աբեղյանի՝ եղանակական բառերը կամ մասնիկները՝ *թերևս, գուցե, հո, արդյոք, գոնե, միթե, անշուշտ, գրեթե, հազիվ թե, չէ՞ որ* և այլն այս կամ այն կերպ եղանակավորում են խոսքը՝ դրվելով հաճախ բայերի և այլ բառերի վրա¹:

Ժամանակակից հայերենում եղանակավորող բառերի մասին ամբողջական ուսումնասիրությունը հատկապես կատարվել է Ս. Աբրահամյանի աշխատություններում: Նա քննադատել է եղանակավորող բառերի և մակբայների ու ձայնարկությունների նույնացման տեսակետը: Նրա կարծիքով եղանակավորող բառերը արտահայտում են խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքը նախադասության կամ նախադասության որևէ անդամի բովանդակության նկատմամբ: Եղանակավորող բառերը զուրկ են նյութական իմաստից, շատ հաճախ նրանք չեն հանդիսանում նախադասության անդամ: Այնինչ, մակբայները կարող են հանդես գալ որպես նախադասության անդամ: Մակբայները կիրառվում են

¹ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 131:

անկախ խոսողից, ուստի ունեն օբյեկտիվ բնույթ²: Ս. Աբրահամյանը գրում է, որ եղանակավորող բառերը հիմնականում արտահայտում են մտածական-դատողական վերաբերմունք՝ հաստատում, ժխտում, երկբայություն և այլն³:

Ս. Ասատրյանը դեմ է այն կարծիքին, որ եղանակավորող բառերը չեն կրում որևէ նյութական իմաստ և դրանով էլ տարբերվում են թե մակբայներից և թե նյութական իմաստ արտահայտող մյուս խոսքի մասերից: Նրա կարծիքով, եթե նյութական իմաստ ասելով սոսկ հասկանանք առարկայի և հատկանիշի իմաստ ֆիզիկական առումով, ապա, իրոք, եղանակավորող բառերը զուրկ են նյութական իմաստից: Սակայն այս դեպքում նույնիսկ «ամենանյութական» խոսքի մասերից, օրինակ, գոյականի որոշ խմբեր՝ վերացական գոյականները, ինչպես՝ *լավություն, մեծամտություն, երեխայություն* և այլն, կարող են համարվել նյութական իմաստից զուրկ: Քանի որ եղանակավորող բառերը դատողական բնույթի են, ուստի որպեսզի ապացուցված համարվեր այն հանգամանքը, թե նրանք զուրկ են նյութական իմաստից, պետք է ապացուցվեր, որ եղանակավորող բառերը, օրինակ, կապերը և շաղկապները, խոսքի մեջ սոսկ կատարում են քերականական, այսինքն՝ կապակցող դեր⁴: Սակայն միանգամայն պարզ է, որ եղանակավորող բառերը չունեն կապակցական գործառույթ: Այնուհետև Ս. Ասատրյանը նշում է, որ եղանակավորող բառերի մի խումբ, ինչպես, օրինակ՝ *գուցե, թերևս, իհարկե, անշուշտ, երևի* և այլն, ունեն նյութական իմաստ: Այն, որ եղանակավորող բառերն արտահայտում են նյութական իմաստ և լիարժեք բառեր են, զուցե հաստատվում է միայն նրանով, որ խոսքի մեջ հաճախ հանդես են գալիս որպես ամբողջական նախադասության փոխարինիչներ:

Օր.՝ -Դու այսօր նրան տեսնելու՞ ես:

- *Իհարկե:*

Այստեղից էլ բխում է այն հարցը, թե արդյո՞ք եղանակավորող բառերը կարող են դառնալ նախադասության անդամ, թե՞ ոչ: Որոշ հայ քերականներ գտնում են, որ եղանակավորող բառերը նախադասության անդամ չեն: Այս կարծիքին են Ռ. Իշխանյանը, Ս. Աբրահամյանը և ուրիշներ⁵: Այսպես, Ս. Աբրահամյանը, եղանակավորող բառերը հակադրելով մակբայներին, գրում է «եթե

² Ս. Աբրահամյան, Զբեքվող խոսքի մասերը և նրանք բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Երևան, 1965, էջ 503-504:

³ Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 505:

⁴ Ս. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1983, էջ 439:

⁵ Ռ. Իշխանյան, Մակբայները ժամանակակից հայերենում, (Երևանի համալսարանի «Ուսանողների գիտական աշխատությունների ժողովածու»), Երևան, 1948, N4, էջ 174, Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 503-504:

մակբայները կատարում են պարագայի ֆունկցիա, որի տեսակը որոշվում է մակբայի իմաստային առանձնահատկությամբ, ապա եղանակավորող բառերը նախադասության անդամ չեն լինում»⁶:

Սակայն Մ. Աբեղյանը և Վ. Առաքելյանը հակառակն են պնդում⁷: Մ. Ասատրյանը ևս այդ կարծիքին է և գտնում է, որ չի կարելի պատճառաբանված համարել այն մոտեցումը, որ, ասենք, «Նա *երևի* գա», «*Գուցե* գրի» և նմանատիպ կիրառությունների դեպքում *երևի*, *գուցե* եղանակավորող բառերը նախադասության անդամ չեն համարվում այն պատճառով, քանի որ նրանք արտահայտում են խոսողի սուբյեկտիվ-անձնական վերաբերմունքը⁸:

Եղանակավորող բառերը առանձին բառամիավորներ են: Նրանք ունեն նաև յուրահատուկ շեշտադրություն: Հայերենում նույնպես չբեքվող խոսքիմասային միավոր են՝ չեն հոլովվում և չեն խոնարհվում, ընդլսմնապես չունեն ինքնուրույն խոսքի մասի քերականական կարգեր: Ավելին, եղանակավորող բառերը չունեն հստակ շեշտ, այդ իսկ պատճառով հաճախ չեն տրոհվում որևէ կետադրությամբ:

Գերմաներեն-հայերեն բառարաններում (նկատի ունենք Գր. Մ. Անդրեասյանի, Յու. Գաբրիելյանի, Լ. Սարգսյանի բառարանները), *ja, denn, doch* եղանակավորող բառերը թարգմանվում են հետևյալ կերպ⁹

գերմաներեն

հայերեն

doch

չէ՞ որ, ինչպե՞ս չէ, այո՛, անշուշտ, այնուամենայնիվ, էլի

ja

այո, չէ՞ որ, հո, մինչև իսկ,

denn

միթե՞, ի՞նչ կա որ, իսկ,

Ստորև անդրադառնում ենք նշված եղանակավորող բառերի լեզվական և ոճական գործածությանը գերմաներեն գեղարվեստական գրականությունից կատարած հայերեն թարգմանություններում, ընդ որում պարզելու, թե ինչպես են հայ թարգմանիչները գերմանացի հեղինակների գործերում առկա եղանակավորող բառերը թարգմանել հայերեն: Այլ կերպ ասած՝ տվյալ դեպքում ուշադրության առարկա է այն հարցը, թե գերմանացի կոնկրետ հեղինակների

⁶ Նույն տեղում

⁷ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 381, Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, Ա. Երևան, 1958, էջ 393-395

⁸ Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 440

⁹ Անդրեասյան Գր. Մ., Գերմաներեն – հայերեն բառարան, Երևան, 1976, Գաբրիելյան Յու., Սարգսյան Լ., Գերմաներեն և այլք – հայերեն դպրոցական բառարան, 1998

գեղարվեստական խոսքում տեղ գտած եղանակավորող բառերը հայերեն թարգմանությունների մեջ ինչպիսի համարժեքներ ունեն:

Այդ նպատակով մենք օգտագործել ենք Ստեֆան Զվալգի, Ֆրանց Կաֆկայի և Բերթոլթ Բրեխթի առանձին գործերի և նրանց հայերեն թարգմանությունների ընձեռած նյութը¹⁰:

Նախ ներկայացնենք *doch* եղանակավորող բառի թարգմանական հնարավորությունները և ոճական երանգները:

1. *Doch* բառը, որ, ինչպես տեսանք վերևում, նորագույն բառարաններում ունի *չէ՞ որ, ինչպե՞ս չէ, այո՛, ամշուշտ, այնուամենայնիվ, էլի* համարժեքները: Այնինչ, գեղարվեստական խոսքի հայերեն թարգմանություններում դրանք հանդես են գալիս ոչ միայն հիշյալ, այլև այլ կարգի համարժեքներով: Ուստի այստեղ առանձնացնում ենք երկու խումբ՝ ա) բառարանային համարժեքներին համապատասխանող և բ) այլ կարգի եղանակավորող բառերով հանդես եկող թարգմանություններ:

ա) Օրինակ՝ Er weiß *doch* alles, dummer Junge, er weiß *doch* alles. (FKU, 31) ~ Բայց *չէ՞ որ* նա ամեն ինչ գիտի, հիմար տղա, ամեն ինչ: (ՖԿՂ, 21):

Aber er war *doch* gar nicht der Vater? (BBMCUIK 327) ~ - Բայց *չէ՞ որ* նա չէր տղայի հայրը: (ԲԲԿՄՆԵ, 55):

Ihr solltet lieber Jakob Ochs und Esau Ochs heißen, weil ihr *doch* den Wagen zieht. (BBMCUIK, 327) ~ Ավելի հարմար կլիներ, եթ ձեր անունըը դնեին Եզ Դակոբ և Եզ Եսայի. *չէ՞ որ* սալի եք լծված: (ԲԲԿՄՆԵ 55):

Er hat *doch* jeden Zug, jede Gegenpointe auf fünf, auf sechs Züge vorausberechnet. (StZSchN, 310) ~ Բայց *չէ՞ որ* նա կանխատեսում էր յուրաքանչյուր կոնքինացիա, յուրաքանչյուր հանդիպակաց մաներ, զոն, հինգ-վեց քայլ առաջ: (ՍՅՇՆ, 165):

„Aber der König gehört *doch* auf f 7...“ (StZSchN, 343) ~ - Բայց *չէ՞ որ* արքան պետք է լիներ f 7-ի վրա: (ՍՅՇՆ, 197):

բ) Այժմ բերենք այնպիսի օրինակներ, որտեղ *doch* եղանակավորող բառը չի համապատասխանում բառարանային համարժեքներին:

Օրինակ՝ Obwohl dieser neue Champion im strengen Sinne nicht zur Stadt gehörte, war *doch* der heimische Nationalstolz lebhaft entzündet. (StZSchN, 295) ~

¹⁰ Bertolt Brecht, Mutter Courage und ihre Kinder, /այստիտի/BBMCUIK/ Stefan Zweig, Schachnovelle, /այստիտի/ StZSchN/, Franz Kafka, das Urteil, /այստիտի/ FKU/, Բերթոլթ Բրեխթ, Լուկրուլուսի դատը, թարգմ.՝ Պարույր Միքայելյան, Երևան, 1973, Ստեֆան Զվալգ, Շախմատային նովել, Երևան, 1986, Ֆրանց Կաֆկա, Սիրենների լուրջությունը, թարգմ.՝ Արա Առաքելյան, Երևան, 1994

Խիստ ասած, նոր չեմպիոնը քաղաքի բնիկներից չէր. *այնուհանդերձ*, տեղական հայրենասիրությունն զգալ էր տալիս իրեն: (ՍՅՇՆ, 149):

„Liebe Eltern, ich habe euch *doch* immer geliebt.“(FKU, 32) ~ - Թանկագին ծնողներ, ես ձեզ, *միևնույն է*, սիրում եմ: (ՖԿՂ, 22):

So kann ich *doch* nicht herumlaufen, wenn die Katholischen kommen BBMCՄԻԿ, 351) ~ *Յո* չե՞մ կարող գլխաբաց վազվզել. ուր որ է, կաթոլիկները կգան: (ԲԲԿՄՆԵ, 79):

... und dabei unbegrenzt in seiner Kombinationen, ständig sich entwickelnd und *doch* steril ... (StZSchN, 299) ~ ... և միաժամանակ անսահման իր կոմբինացիաներում, անընդհատ զարգացող և *միանգամայն* անպտուղ ... (ՍՅՇՆ, 154):

Am dritten Tag gelang es und gelang *doch* nur halb. (StZSchN, 30) ~ Երրորդ օրն իմ ծրագիրն իրականացավ, *թեև* ոչ ամբողջապես: (ՍՅՇՆ, 156):

Aber in Wirklichkeit wartete ich, ... , in meiner unseligen Gier *doch* nur darauf, wieder zurückgeführt zu werden in meine Zelle. (StZSchN, 330) ~ Իսկ իրականում, ..., ես *պարզապես* անհամբեր սպասում էի, թե երբ ինձ կվերադարձնեն իմ խուցը: (ՍՅՇՆ, 185):

„Darum *doch* sperrst du dich in dein Bureau, niemand soll stören, der Chef ist beschäftigt.“ (FKU, 29) ~ Դրա համար *էլ* դու փակվում էիր քո գրասենյակում, իբրեւ թե՛ տեսեք, չե՞ք զբաղված է: (ՖԿՂ, 18):

Das Attraktive des Schachs beruht *doch* im Grunde einzig darin, dass sich seine Strategie in zwei verschiedenen Gehirnen verschieden entwickelt, ... (StZSchN, 327) ~ Ըստ էության շախմատի գլխավոր հմայքն *էլ* հենց այն է առաջին հերթին. որ խաղի ստրատեգիան զարգանում է երկու տարբեր մարդկանց ուղեղներում միաժամանակ. ... : (ՍՅՇՆ, 181):

Das ist *doch* völlig ausgeschlossen. (StZSchN, 310) ~ Դա *պարզապես* անհավանական է: (ՍՅՇՆ, 165):

Ի դեպ՝ այժմ կբերենք այնպիսի օրինակներ, որտեղ *doch* եղանակավորող բառը թարգմանված չէ:

Օրինակ՝

... uralt und *doch* ewig neu, mechanisch in der Anlage und doch nur wirksam durch Phantasie, ... (StZSchN, 299) ~ ...այն և՛ հին է, և՛ հավիտենապես նոր, ... (ՍՅՇՆ, 154):

„Aber das ist *doch* ganz unmöglich!“ (StZSchN, 310) ~ - Բայց դա անհնար է: (ՍՅՇՆ, 165):

Ինչպես տեսնում ենք, *doch* եղանակավորող բառն այս նախադասությունների մեջ թարգմանված չէ: Սակայն, մեր կարծիքով, նախադասությունն

ավելի հուզական և արտահայտիչ կիններ, եթե *doch* եղանակավորող բառը թարգմանված լիներ, ինչպես, օրինակ՝

...այն և հին է, և, *այնուամենայնիվ*, հավիտենապես նոր, ...

Բայց *չէ՞ որ* դա անհնար է:

Կամ՝

Meine Welt bestand *doch* nur aus Tisch, Tür, Bett, ... (StZSchN, 317) ~ Իմ աշխարհը սահմանափակվում էր սեղանով, դռնով, մահճակալով, ... (ՍՅՇՆ, 172) ~ *Չէ՞ որ* իմ աշխարհը սահմանափակվում էր սեղանով, դռնով, մահճակալով, ...

„Du weißt *doch*, Vater, dass ich ihn meine Verlobung zuerst verschweigen wollte.“ (FKU, 27) ~ - Դու գիտես, հայրիկ, որ ես սկզբում նրան մեր նշանադրության մասին չէի ուզում հայտնել: (ՖԿՄ, 15) ~ - *Չէ՞ որ* դու գիտես, հայրիկ, որ ես սկզբում նրան մեր նշանադրության մասին չէի ուզում հայտնել:

... selbst die verwegenen Hypothesen waren uns nicht verwegen genug, um dierätselhafte Scheu und das überraschende Bekenntnis des Fremden mit seiner *doch* unverkennbaren Spielkunst in Einklang zu bringen. (StZSchN 311) ~ ... նրա անսպասելի հայտարարությունը, թե չի խաղացել արդեն բազմաթիվ տարիներ և այդ բոլորը հակադրում էինք նրա խաղի ակնհայտ վարպետությանը: (ՍՅՇՆ 166) ~ ... նրա անսպասելի հայտարարությունը, թե չի խաղացել արդեն բազմաթիվ տարիներ և այդ բոլորը հակադրում էինք նրա խաղի *միանգամայն* ակնհայտ վարպետությանը:

Այսպես խոսքը ավելի արտահայտիչ և գեղեցիկ կլիներ:

Վերոնշյալը *doch* եղանակավորող բառի վերաբերյալ էր: Այժմ *ja* և *denn* եղանակավորող բառերի վերաբերյալ:

2. *Ja* - այո, *չէ՞ որ*, *հո*, *մինչև իսկ*

Ja եղանակավորող բառի դեպքում ևս կարելի է առանձնացնել երկու խումբ՝

ա) բառարանային համարժեքներին համապատասխանող և բ) այլ կարգի եղանակավորող բառերով հանդես եկող թարգմանություններ, որոնք թարգմանչի ոճական գործածության հետևանք են:

ա) „Ich weiß nicht“, rief ich ohne Klang “ ich weiß *ja* nicht “ (FKU, 12) ~ -ես չգիտեմ,- առաջի ես անծայն,- *չէ՞ որ* ես չգիտեմ: (ՖԿՄ, 9)

բ) Sollte man ihm vielleicht raten, wieder nach Hause zu kommen, ..., alle die alten freundschaftlichen Beziehungen wieder aufzunehmen - wofür *ja* kein Hindernis bestand - und im übrigen auf die Hilfe der Freunde zu vertrauen? (FKU, 23) ~ Գուցե նրան խորհուրդ տաս վերադառնա տուն ... նորացնի՞ իր հին ընկերական կա-

պերը. *մանավանդ որ* դրան խանգարող ոչինչ չկա, իսկ մնացածի մասին արդեն ընկերները կհոգան: (ՖԿՂ, 10)

Vielleicht gelang es nicht einmal, ihn überhaupt nach Hause zu bringen – er sagte *ja* selbst, dass er die Verhältnisse in der Heimat nicht mehr verstünde ... (FKU, 24) ~ Հավանաբար, այլևս չի հաջողվի նրան հայրենիք բերել, ինքն *էլ* ասում էր, որ արդեն մոռացել է հայրենիքի նիստուկացը... (ՖԿՂ, 11)

„Hier ist es *ja* unerträglich dunkel“, sagte er dann. (FKU, 26) ~ - *Բայց* այստեղ անտանելի մութ է, - ասաց նա հետո: (ՖԿՂ, 14)

Նաև մեկ օրինակ, որտեղ *ja* եղանակավորող բառը թարգմանված չէ:

„Es ist *ja* ganz warm draußen“, sagte Georg. (FKU 27) ~ Դրսում լավ տաք է, - ասաց Գեորգը: (ՖԿՂ, 14)

3. denn - միթե՞, ի՞նչ կա որ, իսկ

Denn եղանակավորող բառի դեպքում մեր գտած օրինակներից ոչ մի թարգմանություն չի համապատասխանում բառարանային համարժեքներին և թարգմանված է այլ կարգի եղանակավորող բառերով: Ի դեպ, denn եղանակավորող բառի՝ հայերեն գեղարվեստական խոսքում թարգմանական ձևերը համապատասխան են *doch* և *ja* եղանակավորող բառերի բառարանային համարժեքներին:

Օրինակ՝ Was ist denn geschehen. Ist es ein besonderes, nie gut zu machendes Unglück? (FKU, 7) ~ Առոյ՞նք ի՞նչ է պատահել(ՖԿՂ, 9):

Kann er denn von unserer Heirat nicht auch auf andere Weise erfahren? (FKU, 25) ~ - *Բայց չէ՞ որ* նա հարսանիքի մասին կիմանա ուրիշներից (ՖԿՂ, 13) :

Ich würde ganz gern – warum denn nicht – einen Ausflug mit einer Gesellschaft von Niemand machen. (FKU, 12) ~ Ես մեծ հաճույքով զբոսանքի կգնայի նրա հետ:

Այս նախադասությունում denn եղանակավորող բառը թարգմանված չէ: Թարգմանելիս կստանանք հետևյալ պատկերը՝

Իսկ ի՞նչու՞ ոչ, ես մեծ հաճույքով զբոսանքի կգնայի նրա հետ:

Ինչպես տեսանք, *doch* եղանակավորող բառի գործածական ոլորտն ավելի ընդարձակ է, քան մյուս երկու եղանակավորող բառերինը: Ավելի պակաս գործածվում է *ja* եղանակավորող բառը, իսկ առավել պակաս՝ *denn*-ը:

Գերմաներեն այս երեք եղանակավորող բառերի դիմաց հայերենում կան թվով ավելի շատ եղանակավորող բառեր, որոնք գեղարվեստական խոսքում առաջ են բերել թարգմանական յուրահատուկ հնարավորություններ: Դրանք հիմնականում թարգմանված են բառարաններում, մի մասն էլ թարգմանչի ոճական գործածության հետևանք են:

Գրականություն

1. Արեղյան Ս., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:
2. Արրահամյան Ս.Գ., Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Երևան, 1965:
3. Ասատրյան Ս.Ե., ժամանակակից հայոց լեզու, Չևարանություն, Երևան, 1983:
4. Անդրեասյան Գր. Ս., Գերմաներեն – հայերեն բառարան, Երևան, 1976:
5. Առաքելյան Վ., Հայերենի շարահյուսություն, Ա, Երևան, 1958:
6. Գաբրիելյան Յու., Սարգսյան Լ. և այլք, Գերմաներեն – հայերեն դպրոցական բառարան, 1998:
7. Իշխանյան Ռ., Սակրայները ժամանակակից հայերենում, (Երևանի համալսարանի «Ուսանողների գիտական աշխատությունների ժողովածու»), Երևան, 1948, N4:
8. Պետրոսյան Հ. Ջ., Հայերենագիտական բառարան, Երևան, 1987:
9. Բերթոլթ Բրեխթ, Լուկուլլուսի դատը, թարգմ.՝ Պարույր Միքայելյան, Երևան, 1973:
10. Ստեֆան Ցվայգ, Շախմատային նովել, Երևան, 1986:
11. Ֆրանց Կաֆկա, Սիրենների լռությունը, թարգմ.՝ Արա Առաքելյան, Երևան, 1994:
12. Brecht, Bertolt, Stücke, Aufbau – Verlag Berlin und Weimer, 1970:
13. Kafka, Franz, Sämtliche Erzählungen, Herausgegeben von Paul Raabe, Frankfurt am Main, 1969:
14. Zweig, Stefan, Novellen, Laporella: Aufbau Verlag 1977:

The Armenian Translation of Some German Modal Words in Fiction

The following article refers to the stylistic charge of a number of modal words in Modern German, analyzed within the literary context and in comparison with their Armenian equivalents in the corresponding translations.

The key analysis has been carried out to describe the Armenian translator's methods of transferring the above mentioned German modal words into Armenian in specific works of fiction, as well as to trace parallels between the German modal words and their Armenian equivalents.